

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ  
ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԶԵՎԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (XVII—XX ԴԴ.)**

**Ա. Լ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ**

Հայերենի զարգացման նոր շրջանն ընդգրկում է 17-րդ դարի սկզբներից մինչև մե, օրերը: Այս շրջանի լեզուն աշխարհաբարն է: «Բայց ինչպես որ գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար: Այնպես որ, երբ կարդում ենք աշխարհաբարի հնագույն շրջանի գրվածքները, դեռ զգում ենք միջին հայերենի շունչը»<sup>1</sup>: Այն սահմանազատված չէ նաև հայերենի բարբառներից և գրաբարից:

Հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական մասնատվածության, Հայաստանում տեղի ունեցող պատերազմների պայմաններում, երբ հայ մշակույթը և գրականությունը դանդաղ էին զարգանում, լեզուն չէր կարողանում ազատվել բազմաձևությունից: Տարբեր հեղինակների, տարբեր ժանրերի, մինչև անգամ միևնույն հեղինակի տարբեր գործերում այն տարբեր բնութագիր ունի. գերակշռում են կամ գրաբարի ու միջին հայերենի, կամ էլ որևէ բարբառի քերականական իրողությունները: Նոր գրական հայերենին բնորոշ լեզվական երևույթների օրինաչափացումը շատ դանդաղ էր ընթանում: Մեր նպատակն է ցույց տալ, թե նոր գրական հայերենի մշակման ընթացքում հին հայերենի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը ձևագործառական ինչպիսի փոփոխություններ են կրում:

**Ա. Հին հայերենի ներկա ժամանակի համադրական կառույցների  
ձևային փոփոխությունները XVII—XX դդ.-ում**

Հին հայերենի ներկայի բայաձևերն այս շրջանում հանդես էին գալիս ինչպես հին հայերենին բնորոշ դիմային վերջավորություններով, այնպես էլ նրանց փոփոխված ձևերով, որոնք գալիս էին կամ միջին հայերենից, կամ ձևավորվել էին այս շրջանում՝ պայմանավորված դրան բնորոշ հնչյունական փոփոխություններով: Համադրական կառույցներին հատուկ են հետևյալ դիմային վերջավորությունները.

Եզակի թիվ	Հոգնակի թիվ
—մ	—մք, նք
—ս	—յք, ք
—յ, անվերջույթ	—ն

Նոր ձևերը, ավելի հաճախանալով, բնականաբար ձգտում էին տիրապետության, չնայած երկար ժամանակ նրանք կիրառվում էին հների հետ կողք-կողքի:

«Չկայ դարդ իմացող, ասող ու լսող

Գայ նստի, գրուց տայ, բանայ էս սիրուն» (ՀԱ, 77):

«Գրել էս թէ՛ ամեն զառն առինք, ձի չի կա... ձի շատ կայ, ամա փողի չես դիմիշ անել...» (ԵԿԴ, 26):

«... որ նոր հունցած դառնաք...» (ՀԱՎ, 40):

«... որ թաշափուլ տայք և ամբերէք մինչև մեք գամբ...» (Էզով, 259):

«... Խմենք եղբարք, գինի...» (ՆՀԲ, 171):

Նախորդ շրջանի համեմատ կարևոր առանձնահատկություն էր և լծորդության ներ-

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 441:

գործական և չեզոք սեռի բայերի եզակի III դեմքում է (ե) > ի հնչյունափոխությունը.

Հաւ է՝ ջո պարոն կենդանի չի.

Քեզ տեսնողին ո՞նց ամանչի,

Քանի որ քակեսուր տան չի՝

Եկ այվանն,

Բեր սեղանն

Քեզ հետ խմի, տաղեր կանչի Յովնաթանն (ՆՀԲ, 99):

Հայերենի զարգացման միջին շրջանում ևս հանդիպում են նման հնչյունափոխության օրինակներ: Ս. Անթույսյանը վկայակոչում է մի օրինակ Ամասիացուց. «... Եւ գգչովսն կու յերեսսցան, եւ չի թողո՛ր, որ շուտ հարքի մարդն»<sup>2</sup>:

Քուչակից մի օրինակ է վկայակոչում Ս. Աբրահամյանը.

«— Ամուր եմ քարիդ նման,

Որ մրճիկն ի յիս չի բանի,

Բարձր եմ թո՛խ ամուիդ նման,

Որ ոչ ով ի յիս չի հասնի»<sup>3</sup>:

«... և հետ այնոր փոքրով գաբևփոփինա կերաւ: Եի շաբարով և գարեջուր խմէ. հով և գինային կերակր քք ի բան տանի: Ապա չերմն հունգարտի, նս սակաւ սակաւ հով շուր խմէ, և ամենևին չ՛ յառի զամճն...» (ՄՀՋՄ, գլ. ԺԴ):

Այս օրինակները յույց են տալիս, որ լեզվում միտում է եղել նման փոփոխության, որ հավանաբար կատարվել է ի լծորդության բայերի համաբարանությամբ:

Այն գործերում, ուր հանդիպում են է(ե) > ի հնչյունափոխության դեպքեր, կան կու (կ) -ով կառույցների ժխտական խոնարհման ձևերի անորոշ դերբայի ել վերջավորության՝ ի-ով հնչյունափոխությամբ կիրառություններ:

«... 2ի գտնիչ մէկ եչն ու կը՞» (ՆՀԲ, 118):

«... որ մարդ կարիչ չէ ծովին մտենալ» (ՋԱՕ, 24):

Հավանական է թվում Ս. Անթույսյանի եզրադրությունը. որ «... մեկ անգամ որ ժրխտական ձևում ե-ի հնչյունափոխությունը կատարված էր, կտրող էր նաև հաստատական ձևում արտահայտվել»<sup>4</sup>:

Հին հայերենի ներկայի բայաձևերը երկար ժամանակ հանդես էին գալիս ինչպես ե, այնպես էլ ի վերջավորություններով նույնիսկ նույն հնչյունակի ստեղծագործություններում.

«... որ Մայխասը չճանաչե...» (ՌԵ, 119):

«... գուցե արշալույս ողջունե երկինք...»

«... գուցե մի նոր լույս հալածե մութը» (ԱԻ, 15):

«Եթե շիկնի,

Կըսես.— «Հիմա կը բռնկի» (ՊԴՏ, 37):

Բայց՝ «Եթե հրճե տխուր կոչնակ,

Թրթոուն ծիծաղն մահու դժխես,

Դագաղս առնե իր համր քայլ...» (ՊԴՏ, 80):

Ի-ով ձևերը ժառանգվում են գրական տղևնահաշիբների կողմից:

«Որ ... կարտոն ինքը հաշտվի իրեն հետ,

Ու տառապանքը ինքն իրեն նեղի...» (ՊՍ, 291):

Գրական արևմտահայերենում երկու ձևերն էլ կիրառական են.

«... երբ ծագե նոր արշալույս...» (ՀԳՊՀ, էջ 218):

«Թող որ ս-ն հոն միշտ փայլի վառ ու անշեջ...» (ՀԳՊՀ, էջ 218):

Հին հայերենի ներկայի բայերը ժխտական խոնարհման ձևերը կազմում են ոչ, չ, չի մասնիկների միջոցով: Սա տևում է մինչև գրական հայերենի մշակման ավարտը: Ժրխտական ձևույթներից ոչ-ը սակավադեպ է. ոչ ամաչէ (ՆՀԲ, 88), ոչ մոռանաս (ԵԿԴ, 98), չհանեն (ԵԿԴ, 16), չի հովանա (ՆՀԲ, 286), չի տեսնեմ (ՀԱՎ, 48):

2ի և չ ձևույթների միջև ստիպարբոր որևէ ընտրություն չի կատարվում, և երկուսն էլ կիրառվում են հավասարապես: Որոշ աշխատություններում միայն երբեմն նկատելի է որանցից որևէ մեկի գերակշռությունը մյուսի նկատմամբ: Օրինակ՝ «Պարզաբանութիւն...» կամ «Հարաբունն աստուածունիս վկայութեանց» աշխատություններում հին հայերենի ներկայի բայաձևերի ժխտական կազմության համար գլխավորապես կիրառված է չի մասնիկը:

<sup>2</sup> Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1975, հ. II, էջ 329:

<sup>3</sup> Ս. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց նկարագրական նշանակությունը, Ե., 1953, էջ 245:

<sup>4</sup> Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, էջ 329:

Ժխտականի կազմության այս ձևությամբից նոր գրական հայերենի երկու տարբերակներում իբրև ըզձական եղանակի ժխտական խոնարհման արտահայտիչ հաստատվում է «չ» մասնիկը. չկիսե (ՊՍ, 233), չիմանա (ԱԻ, 137), չկայծակե (ԴՎ, 444):

Արևմտահայ հեղինակների ստեղծագործություններում երբեմն հանդիպում են նաև չի-ով ձևեր. «... շտապեցեք, որ շապիկը չի չորնա...» (Ս, 145):

### Բ. Հին հայերենի ներկա ժամանակի համադրական կառույցների գործառությունը XVII—XX դդ.-ում

Հին հայերենի ներկայի բայաձևերը իրենց քերականական բազմիմաստությունը պահպանում են նոր գրական հայերենի ձևավորման ամբողջ ընթացքում: Միջին հայերենի շրջանում հին հայերենի ներկայի բայաձևերի համար անփոփոխակապից իմաստներ էին ինչպես սահմանական եղանակի ներկա ժամանակի իմաստը, այնպես էլ ըզձական եղանակի ապառնի ժամանակի իմաստը: Նոր գրական հայերենում նրանց համար իբրև անփոփոխակապից քերականական իմաստ է մնում ըզձական եղանակի ապառնի ժամանակի իմաստը: Միշտ է, ներկա ժամանակի իմաստի արտահայտման գործառությամբ նրանք շարունակում էին հանդես գալ դեռ երկար ժամանակ, բայց սա սրղեն գրաբարամետ իրողություն էր:

Մինչև գրական հայերենի երկու տարբերակների մշակման ավարտը լեզուն չէր կարողանում ազատվել քերականական միևնույն իմաստը արտահայտելու համար գործածվող բազմազան ձևերից:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը ևս ուներ բազմակերպ արտահայտություն: Այն արտահայտվում էր միջին հայերենին, «կ» ճյուղի բարբառներին (որը և պետք է ժառանգի արևմտահայ գրական հայերենը) բնորոշ կել (կ)-ով համադիր կառույցների միջոցով, «ուս» ճյուղի բարբառներին բնորոշ (որ պետք է ժառանգի գրական արևելահայերենը) ուս-ով անկատար դերբայով և օժանդակ բայով, արևմտյան բարբառներին բնորոշ ման-ով դերբայի և օժանդակ բայի, ինչպես նաև էին հայերենի ներկայի բայաձևերի միջոցով:

Հին հայերենի բայաձևերի կիրառական համախառնականությունը պայմանավորված է նրանով, թե տվյալ գործում գրաբարի՞ն, միջին հայերենի՞ն, աշխարհաբարի՞ն, թե՞ բարբառներին (այն էլ ո՞ր բարբառին, արևելյան, թե՞ արևմտյան) բնորոշ լեզվական իրողություններն են գերակշռում: Նույնիսկ միևնույն հեղինակի տարբեր գործերում այդ բայաձևերը ներկա ժամանակի իմաստով դրսևորվում են տարբեր համախառնականությամբ:

17-րդ դարի գեղարվեստական գրականությունը գլխավորապես արտահայտվում է գուսանական արվեստի տեսքով: 17-րդ դարի նորոգապեցի գուսանների՝ Էզազի, Արզունու և Բաղեր Օղլու ստեղծագործություններում հին հայերենի ներկայի բայաձևերը հանդես են գալիս ըզձական եղանակի ապառնի ժամանակի իմաստով: Իբրև առյալիսին նրանք ցույց են տալիս՝

1) խոսողի իղձը, ցանկությունը կատարելի գործողության նպատակներ.

«Ծիլացուցէլ ա քո սէրն...

Գնամ ընկանես գետերն,

Չի տանում ջուրն, ինչ անես» (Էզազ, 78):

«Թամաշայ երթանք գետափն, ինչ կելնի»

(Բաղեր Օղլի Ղազար, 121):

2) խոսողի երկմտանքը կամ կասկածը (երբեմն հարցումը՝ կատարելի գործողության նպատակներ՝ կարելիական ըզձական.

«... Գուցե թողնեն քեզ մեր տունը» (Էզազ, 82):

«Քանի սաղ եմ՝ քեզի տեսնես վայ աճ»:

Վայ թե ունպրս փչացնես՝ գայ անես

Է՛մն դո՞ր քերես ոչխարին թայ անես...»

(Բաղեր Օղլի Ղազար, 137):

3) խոսողի պատվերը, հանձնարարությունը՝ պատվիրական ըզձական.

«Նամարդի հետ չնստես մէջլիս և սօհրաք...», (Արզունի, 91):

«Ասի, ում որ ուղարկես գաս,

Դրիստ վաղայ դնես, շարք տաս» (Բաղեր Օղլի Ղազար, 128):

Ըզձական եղանակի ապառնի ժամանակի իմաստով նրանք հանդես են գալիս շարահյուսական որոշակի կառույցներում:

<sup>5</sup> Օրինակները բերվում են ըստ «Հայ աշուղներ» (Ե., 1961) ժողովածուի:

«թէ ֆրիադ տան, տես դոր կանեն...» (Արզունի, 102):

«... Մ'ն օր որ ես քեզ չտեսնեմ,

Հէնց գիտեմ գլխիս քար այ գոլման» (Հգագ, 81):

«Եթէ բոլոր աշխարհս գովես,

2ի խոսաման գրչի ման» (Արզունի, 87):

«Մեղայ չեմ տուէր, որ առնեմ թողութիւն...» (Հգագ, 83):

Ինչպես տեսնում ենք, նրանք հանդես են եկել պայմանի, նպատակի պարագա երկրորդական նախադասությունների կազմում:

Հանախաղեայ են պայմանահետևանքային իմաստ արտահայտող բարդ համադասական նախադասության կազմում կիրառությունները, երբ պայման արտահայտող նախադասության ստորոգյալն արտահայտված է հրամայական եղանակի բայաձևով.

«Արի նշանաբան տամ, տեսնեմ մտնիդ ա...» (Հգագ, 74):

«Ասացին եկէք պոծեցանենք մեր ջանքն...» (Բաղեր Օղլի Ղազար, 118):

Ե՛վ նախադասության բովանդակությամբ, և՛ կառուցվածքով պայմանավորված կիրառությունները նորություն չէին մեր լեզվի համար: Նրանք, իբրև հին հայերենի ներկայի բայաձևերի երկրորդական կիրառություններ, գոյություն ունեին 5-րդ դարից սկսած և իբրև ներկայի բայաձևերի օխավոր կիրառություններ (ըղձական եղանակի ապառնի ժամանակի իմաստով)՝ հաստատվում են միջին հայերենի շրջանում և, բնականաբար, ժառանգվում նոր գրական հայերենի կողմից:

Ժամանակի միջբարբառային խոսակցական հայերենով գրված աշխատության լավագույն օրինակ է 17-րդ դարի հեղինակ Ջաքարիս Ագուլեցու «Օրագրությունը», որի լեզվում, բնականաբար, տեղ են գտել նաև գրաբարյան և միջին հայերենյան լեզվական իրողություններ:

Հին հայերենի ներկայի բայաձևերը, լինելով ըղձական եղանակի ապառնի ժամանակի հիմնական արտահայտիչներ, շարունակում են գործառնվել ներկա ժամանակի իմաստով:

Այս կիրառությունները տարածված են աշխատության առաջին բաժնում՝ «Ուղեչափություններում», իբրև նկարագրական ներկա:

«Աստի գնայ Թիքմի բէլն անց կենայ, գետի վրայ իջնու...» (ՋԱՕ, 8):

Որոշ դեպքերում բայաձևը կարելի է ըմբռնել ինչպես ներկա (ընդհանրական ներկա), այնպես էլ ըղձական ապառնու իմաստով՝ վերջինիս նախընտրությամբ:

«Աստի որ գաս, թէ բանդովն գաս, մին Օրթայ ուլումն անց կու կէնան ջուրն. թէ որ բանդովն չգամ, Բ անգամ Երաստղն անց կենայ, ապա գայ Օրթայ ուլումն անց կենայ աղաջ Դ» (ՋԱՕ, 8):

Հանախաղեայ են նրանց գործածությունները ըղձական ապառնու իմաստով.

«... դրին, որ մալ ու թավջին անէ» (ՋԱՕ, 80):

«... ինչ փող որ խարջիս, իմ քեռի Ղուգագէն առ» (ՋԱՕ, 82):

Սահմանական եղանակի ներկա ժամանակն արտահայտված է նաև անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի (բարբառային տարբերակներով) միջոցով կազմված հարադիր ձևերի և կու (կ)-ով կառույցների միջոցով: Ագուլեցու «Օրագրությունում» հին հայերենի ներկայի 170 բայաձևեր կիրառված են ներկա ժամանակի իմաստով, 256 բայաձևեր՝ ապառնի ժամանակի իմաստով (ըստ որում կու (կ)-ով 126 բայաձևերից ներկայի իմաստ են արտահայտում 88-ը: Կա ներկայի 48 աշխարհաբարյան կառույց. 88-ը՝ ում-ով անկատար դերբայով, 5-ը՝ իս-ով):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկա ժամանակի իմաստով կիրառված հին հայերենի ներկայի բայաձևերի մի մասը կարող ենք ընկալել նաև ըղձական ապառնու իմաստով, պետք է նշել, որ հեղինակը ներկայի արտահայտության գրաբարյան և միջին հայերենյան ձևերը կիրառել է հավասարապես: Քիչ թիվ չեն կազմում նաև աշխարհաբար ձևերը: Ըստ որում, աշխատությունում հին հայերենի ներկայի բայաձևերի՝ ներկա ժամանակի իմաստով գործածությունները զիջում են ապառնի ժամանակի իմաստով կիրառություններին:

Հին հայերենի ներկայի բայաձևերը «Օրագրությունում» հաճախ հանդես են եկել նաև անցյալ ժամանակի իմաստով՝ իբրև պատմական ներկա.

«Դարձեայ, Աղամիրն ստ Աստուած գնայ: Մնաց սորայ մին աղչիկ, անուրն Բանաշահ: Այս Բանաշահն գնայ խձայձոր... մարդի... Այս Երանջանն առ Աստուած գնայ: Մնաց Բ տղայ, մին աղչիկ» (ՋԱՕ, 92):

1675 թ. Մաքսելում լույս է տեսնում «Արինեստ համարողութեան...» առաջին տպագիր աշխարհաբար գիրքը: Այն թվաբանության ձեռնարկ է, որը պետք է շարադրված լիներ հայ վաճառականներին մատչելի լեզվով: Գրքում սահմանական եղանակի ներկա ժամանակն արտահայտված է կու (կ)-ով համադիր կառույցի միջոցով: Հին հայերենի ներկայի բայաձևերն հանդես են եկել ըղձական եղանակի ապառնի ժամանակի իմաստով.

«... թե որ մին գիր վերի կողմեն քոնենք ... ինչ որ ուզենք՝ կու գտանենք» (ԱՀ, 98):  
1887 թ. լույս է տեսնում «Պառզաբանություն հոգեհուազ սալմասացն...» գիրքը, որը նոր գրական հայերենով երկրորդ տպագիր գիրքն է: Այն բովանդակվում է գրաբար սաղմունների աշխարհաբար պարզաբանությունները: Սաղմունները բերվում են գրաբարով, իսկ մեկնությունները՝ աշխարհաբարով: Ներկա ժամանակն այստեղ գլխավորապես արտահայտված է կու (կ)-ով կառույցի միջոցով: Ում-ով անկատար դերբայով և օժանդակ բայով ներկայի բացառիկ օրինակներ կան միայն:

Հին հայերենի ներկայի բայաձևերն ըղձական եղանակի ապսոմի ժամանակի արտահայտիչներ են.

«... կուզեն՝ թե զիս հայաձեն և կորուսանեն» (Պարզ, 21):

17—18-րդ դարերի բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունների լեզուն ներկայացնում է գրաբարի, միջին հայերենի, նոր գրական հայերենի, բարբառի մի ամբողջություն, և հաճախ դժվար է լինում որոշել, թե լեզվական տվյալ որակը հատկապես ինչպիսի ազդեցություն պետք է համարել:

Հին հայերենի ներկայի բայաձևերը հանդես են գալիս ներկա և ըղձական ապսոմի ժամանակների իմաստներով: Նրանք ներկա ժամանակի իմաստով ավելի շատ կիրառված են «ՆՍճնույքի երգերում»: Ըստ որում «ՆՍճնույքի երգերում» ներկան արտահայտված է նաև կու (կ)-ով կառույցների միջոցով: Ներկայի՝ հարադիր կազմության բացառիկ օրինակներ կան միայն, իսկ «Երգիծական երգերում» սահմանական ներկայի տիրապետող արտահայտությունը անկատար դերբայով և օժանդակ բայով հարադիր կազմությունն է: «Սիրո երգերում» տիրապետում են ներկայի արտահայտության կու (կ)-ով կազմությունները:

«Ոչ ի յաստուծոյ երկնչին

Եւ ոչ ի մարդկանէ ամաչին» (ՆՀԲ, 119)

Հովնաթանի բոլոր երգերում հին հայերենի ներկայի բայաձևերի՝ իբրև ըղձական եղանակի ապսոմի ժամանակի արտահայտիչների, կիրառությունները գերակշռում են ներկա ժամանակի իմաստով գործածություններին:

«Եկ, նստենք մէջիս, տամք կունն-կունն... (ՆՀԲ, 25):

«Քեզ ո՞նց մոռանամ, զայում,

Ես ո՞նց հեռանամ, զայում» (ՆՀԲ, 9):

Հին հայերենի ներկայի բայաձևերը, ինչպես տեսնում ենք, ըղձական եղանակի իմաստով կիրառություններում արտահայտում են խոսողի իլյձը, ցանկությունը մի կատարելի գործողության նկատմամբ: Նրանք կիրառված են նաև հոետորական հարցում արտահայտող նախադասություններում:

Հին հայերենի ներկայի բայաձևերը երբեմն գործածվել են նաև պայմանական ապսոմու իմաստով: Այս կիրառությունները սակավադեպ են.

«Վաղին ոչ գիտեն, թե զի՞նչ ծնանի,

Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,

Որ այսօր բացուեալ է, վաղին անցանի...» (ՆՀԲ, 170):

Ընդգծված բայաձևերը կարող ենք ընկալել նաև սահմանական ապսոմու իմաստով, որովհետև չկա պայմանի կամ ենթադրության գաղափարը:

Հեղինակը ձևերի որոշակի ընտրություն չի կատարում. հենց միևնույն քառատողում և ութնյակում սահմանական ներկայի արտահայտության համար կիրառում է և՛ հին հայերենի ներկայի ձևեր, և՛ աշխարհաբարին բնորոշ կազմություններ: Կամ հաճախ միևնույն քառատողում հին հայերենի ներկայի բայաձևերը կիրառված են ինչպես ներկա, այնպես էլ ապսոմի ժամանակների իմաստներով.

«Առուն փրփնջագոյ, քաղցրահամ ջուրն,

Երգեն տաղ և քնար, հնչեն սանթուրն,

Ո՞վ տարաւ աշխարհի մալն հետ իւրն,

Ուրախ կաց, որ սրտէդ դուրս գայ դարդ-դամն» (ՆՀԲ, 168):

18-րդ դարի մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների լեզուն ներկայացնում է Թիֆլիսի բարբառն իր առանձնահատկություններով: Հին հայերենի ներկայի բայաձևերը նրա բանաստեղծություններում հանդես են գալիս իբրև ըղձական եղանակի ապսոմի ժամանակի արտահայտիչներ.

«... Թե վուր սարերուն հանդիքիս, դու հալիս մումի նըման...» (ՄՆ, 10):

Ի տարբերություն Սայաթ-Նովայի բանաստեղծությունների, Եղիա Կարնեցու «Դիվանում», օրինակ, հին հայերենի ներկայի բայաձևերը հանդես են գալիս ինչպես ներկա ժամանակի, այնպես էլ ըղձական եղանակի ապսոմի ժամանակի արտահայտման գործառնություններ:

«... սիրով ողջոյն մատուցանեն հրամանուցդ» (ԵՎԴ, 92):

«Դիվանում» տարածված է հին հայերենի ներկայի բայանների կիրառությունը պատվիրման կամ հանձնարարական ըղձականի իմաստով:

«Մօճրն ինձ չհասաւ, մեծ գրքին հետ դրկես: Ալեքսանին փողն տաս իրան: Թոխաթցի Սարքսլին, Արութենին շատ բարև անես...» (ԵԿԴ, 17):

Պատվիրական ըղձականներն հաճախ ընդգծվում են թող բառով.

«... սաա իմ խաթերն համար թող շունն դրկէ...» (ԵԿԴ, 16):

Երկբայական նախադասություններում հին հայերենի ներկայի բայաններն ուղեկցվում են երկընդարձք արտահայտող գուցէ բառով կամ նրա բարբառային՝ հալպաթ տարբերակով.

«Հալպաթ դուն էլ տեղանքտ մին լաւ խապար առնուս, մեզ գրես» (ԵԿԴ, 104):

1711 թ. լույս է տեսնում Ծրյողերի «Գանձ արախան լեզվի» լատիներեն աշխատությունը, որի վերջում բերված են լեզվական նմուշներ՝ «ուն» մտղի բարբառներին հատուկ շատ երևույթներով: Հին հայերենի ներկայի բայանները իբրև ներկա ժամանակի արտահայտիչներ են հանդես գալիս կու (կ) ով համադիր կառույցներին և աշխարհաբարին բնորոշ հարադիր կառույցներին զուգահեռ.

«Չունին այնպիսի երթևեկություն, էդ պատճառէդ բնակին ի վանքերում, որ շինութենէն դուրս կան...» (Ծրյողեր, 331):

Հին հայերենի ներկայի բայանները Երտահայտիչներ են նաև ըղձական եղանակի ապառնի ժամանակի.

«... խնդրեմ ... ինձ հիշարար անես» (Ծրյողեր, 334):

Լեզվական անուղղությունն ու բազմատարրությունն արտահայտված է նաև ժամանակի պաշտոնական գրագրություններում:

Ղարաբաղի մելիքների թղթերում սահմանական եղանակի ներկա ժամանակն արտահայտվում է համադիր և հարադիր կառույցների միջոցով:

Քանի որ գրաբարը համարյա բոլոր թղթերում, մասնավորապես հոգևորականների, իրեն լրիվ զգացնել է տալիս, բնական է, որ ներկա ժամանակի արտահայտման համար շարունակվում են կիրառվել հին հայերենի ներկայի բայանները: Պաշտոնական բոլոր գրություններում նրանք նաև ըղձական եղանակի ապառնի ժամանակի իմաստի արտահայտման ձևեր են:

«ԽՆԴԻՐԵՄ, որ մէկ ուքազ լինի՝ գինիքն օրով գայ, որ զայեա չիճի, զմեզ էլ ճանապարհին հետ չձգեն, շուտով գանք և թագաւորին ոտն համբուրենք» (Եզով, 259):

19-րդ դարի առաջին կեսին հիսնամյակում հին գրական հայերենով հրատարակված գրքերի քանակը մի քանի անգամ գերազանցում է նոր գրական հայերենով լույս չնձայված գրքերին: Վերջիններին մ'ջ գերակշռությունը արևմտահայերենով գրվածներինն է: Այսպես՝ 19-րդ դարի առաջին հիսնամյակում տպագրված 1700 անուն գրքերից նոր գրական լեզվով է գրված 315-ը, որոնցից 39-ը՝ արևելահայերենով, իսկ 276-ը՝ արևմտահայերենով<sup>6</sup>:

Այս ընթացքում լույս ընձայված 30 պարբերականներից մեկը՝ «Արարատ»-ը, գրական արևելահայերենով էր, 20-ը՝ գրական արևմտահայերենով, իսկ մնացածը՝ գրաբարով:

1821—1823 թթ. Կալկաթայում հրատարակվում է «Ծոռեւարան» գրաբար հանդեսը: Նրանում տեղ գտած աշխարհաբար հատվածները ներկայացնում են նորջողայական գրական արևելահայերենի առանձնահատկությունները: «Ծոռեւարանի» լեզուն բազմատարր է: Սահմանական եղանակն արտահայտված է համադիր (գրաբարան և կ-ով կառույցներ) և հարադիր (անկատար դերբայով և օժանդակ բայով) կառույցների միջոցով:

Հին հայերենի ներկայի բայանները ներկա ժամանակի արտահայտման գործառնությամբ հանդես են գալիս ինչպես գրաբարով, այնպես էլ աշխարհաբարով գրված տեքստերում:

«... քանզի խորհուրդս այս ներփակէ և պարտնակէ յինքեան զամենամեծ սեր...» («Ծոռեւարան», 109):

Նրանք արտահայտիչներ են նաև ըղձական եղանակի ապառնի ժամանակի:

«Պարոն Մարտիրոս, գուցէ դու պարապ չիճես, չընդունես, էլ Կալկաթայ մարդ չկայ, որ ընդունի...» («Ծոռեւարան», 72):

Աշխարհաբարով գրված նյութերում հին հայերենի ներկայի բայանները հիմնականում կիրառված են ըղձական եղանակի ապառնի ժամանակի իմաստով:

«... ես էնպես հայր չեմ, որ որդուս առեմ.

և անմեղ տեղն ի գուր գրպարտեմ...» («Ծոռեւարան», 240):

1845 թ. օգոստոսի 16-ից Մեսրոպ Թադևոսյանը Կալկաթայում հրատարակում է «Ազգասեր» պարբերականը: Մինչև նույն թվականի դեկտեմբերի 27-ը այն լույս է տեսնում

<sup>6</sup> Տվյալները բերվում են ըստ Ռ. Իշխանյանի: Տե՛ս Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, էջ 93—94:

աշխարհաբար (գրաբարով առանձին հատվածներով), այնուհետև՝ գրաբար: Պարբերականի աշխարհաբար հատվածներում ավելի շատ տեղ են գտել արարատյան քարքառի լեզվական իրողությունները:

Պարբերականում հին հայերենի ներկայի բայաձևերը ներկա ժամանակի արտահայտման գլխավոր միջոցներն են: Աշխարհաբար հատվածներում նրանք արտահայտիչներ են ըղձական եղանակի ապառնի ժամանակի, չնայած որ աշխարհաբարին բնորոշ (անկատար դերբայով և օժանդակ բայով) կառույցներին, ինչպես նաև կ-ով ձևերին զուգահեռ, հանդես են գալիս նաև ներկայի գործառնությամբ:

Դեկտեմբերից պարբերականը լույս է տեսնում գրաբարով: Բնական է, որ ներկա ժամանակի արտահայտման գլխավոր միջոցը հին հայերենի ներկայի բայաձևերն էին:

«... բայց ի նմին ժամանակի այնպես մեղմ է՝ գի ոչինչ իրաց վնասէ. մանաւանդ յանտառն ուր և բնակի»<sup>7</sup>:

1829 թ. Շուշում լույս է տեսնում «Հասարակ աստուածային վկայութեանց» գիրքը, որը Կովկասում տպագրված առաջին աշխարհաբար գիրքն է:

Գիրքը Ավետարանի տարբեր հատվածների աշխարհաբար թարգմանությունն է: Թարգմանված է արևելահայերենով, որի լեզուն հիմնականում արդեն ձևավորված գրական լեզու պետք է համարել:

Հին հայերենի ներկա ժամանակի բայաձևերն արտահայտիչներ են ըղձական եղանակի ապառնի ժամանակի: Ներկա ժամանակի իմաստով կիրառություններ չկան:

«Քո հոգուդ ես ո՛ր գնամ. և կամ քո երեսիցդ ես ո՛ր փախչիմ: Թէ երկինքը վեր ըլեմ՝ դու էնտեղ ես...» (ՀԱՎ, 70):

Թարգմանությունների լեզուն ներկայացնում է գրական արևելահայերենի առանձնահատկությունները, չնայած որ այն դեռ լիովին ձևավորված չէ: Այդ է վկայում հենց այն հանգամանքը, որ ըղձական եղանակի բայաձևերը (որ են հին հայերենի ներկայի բայաձևերը) ժխտականը կազմում են չի և ոչ թե չ ձևույթի միջոցով, կամ բայաձևը հանդես է գալիս գրաբարին և նոր հայերենին բնորոշ վերջավորություններով, բնապահաբար նորի գերակշռությամբ:

«... Թէ որ Տէրն չի շինէ տունն՝ գուր տեղն են աշխատում նորա շինողներն...» (ՀԱՎ, 36—37):

Գուցե չի-ի նախընտրությունը կարելի է բացատրել կու (կ) -ով կառույցների ժխտական խոնարհման III դեմքի կազմության համաբանությամբ, որոնք տիրապետող են այս երկում, օրինակ՝ «... չի բնակվիլ, չի պաշտվիլ» (ՀԱՎ, 35) ևն:

Ուրեմն և՛ արևելահայերենով, և՛ արևմտահայերենով գրված աշխատությունների լեզուն ներկայացնում էր գրական հայերենի երկու տարբերակների լեզվական առանձնահատկությունները, բայց ոչ մաքուր վիճակում: Նրանք դեռ կրում էին գրաբարի և միջին հայերենի կնիքը, այսինքն՝ նոր գրական հայերենի երկու ճյուղավորումներն արդեն ձևավորվել էին, բայց միատարր չէին և գտնվում էին մշակման ընթացքի մեջ:

Գեղարվեստական գրականության, պաշտոնական գրագրության և պարբերական մամուլի ճյուղերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հին հայերենի ներկա ժամանակի բայաձևերին դեռևս բնորոշ է քերականական բազմիմաստությունը: Նրանք հանդես են գալիս՝

ա) ըղձական եղանակի ապառնի ժամանակի իմաստով, որը նրանց համար անփոփոխական իմաստ է,

բ) ներկա ժամանակի իմաստով, որը գրաբարամետ իրողություն է,

գ)՝ անցյալ ժամանակի իմաստով, իբրև պատմական ներկա: Այս իմաստով նրանք հանդես են գալիս այն աշխատություններում, ուր գործառնություն են նաև ներկա ժամանակի իմաստով: Ուրեմն այս իմաստով կիրառությունները նույնպես գրաբարամետ իրողություններ են,

դ) պայմանական եղանակի ապառնի ժամանակի իմաստով: Այս իմաստով կիրառությունները սակավադեպ են:

Ե՛վ միասնական աշխարհաբարի, և՛ երկնյուղ աշխարհաբարի շրջանում հին հայերենի ներկայի բայաձևերի ներկա ժամանակի իմաստով կիրառությունները գրաբարամետ իրողություններ են: Նրանց կիրառական համախականությունը պայմանավորվում է նրանով, թե տվյալ աշխատության լեզվում գրաբարյան լեզվական իրողությունները որքանով են տիրապետում:

Ուրեմն, ներկա ժամանակի իմաստով գործառնությունից հին հայերենի ներկայի քա-

<sup>7</sup> Ազգասէր, վիպագիր Արարատեան ընկերութեան, հ. Գ, թիւ 64, Կալկաթայ, 1846, հոկտեմբեր 31, էջ 97:

շածները կազատվեին միայն այն դեպքում, երբ գրաբարը դուրս գար գործածությունից, և լեզուն հրաժարվեր գրաբարամետ իրողություններից:

Ինչպես տեսանք, վաղ աշխարհաբարի ենթաշրջանի ավարտին սրղեն հաստատվել էին ինչպես արևելահայերենի, այնպես էլ արևմտահայերենի քերականական շատ իրողություններ: Սահմանական եղանակի ներկա ժամանակն արտահայտվում էր արևելահայերենում՝ անկատար դերբայով և օժանդակ բայով, արևմտահայերենում՝ կու (կ)-ով համադիր կառույցների միջոցով: **Նու (կ)**-ով կառույցները և հին հայերենի ներկայի բայաձևերը այս գործառույթյամբ կամ չէին հաճախ գալիս, կամ սակավադեպ էին: Հին հայերենի ներկայի բայաձևերը գործածվում էին ըղձական եղանակի ապառնի ժամանակի անփոփոխակալին իմաստով:

Այսպիսով, հին հայերենի ներկայի բայաձևերը նոր գրական հայերենի երկու տարբերակներում էլ հաստատվում են իբրև ըղձական եղանակի ապառնի ժամանակի արտահայտիչներ:

Ըղձական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսողի իղձը, ցանկությունը, երազանքը մի կատարելի գործողության նկատմամբ:

«Երնեկ, երնեկ, երազ լինիմ

Քըռնիմ մտորդ, մայրիկ ջան» (ԱԻ, 97):

«Լոզանքէն վերջ՝ հետդ առանձին՝

Քաղենք, քաղենք ծովափին վրա...» (ԴՎ, 464):

Նրանք հաճախ արտահայտում են խոսողի երկմտանքը, կասկածը կամ էլ հոնտորական հարցումը կատարելի գործողության նկատմամբ.

«Սիրտ իմ, սպասիր, գուցե արշալույս

Ողջունե ետկինք, գուցե մանուշակ

Ծաղ տա բլուրեղներ, գուցե մի նոր լույս

Հալածե մութը, գուցե հաղթանակ

Տանիս կույի մեջ— մի հուսահատվիր...» (ԱԻ, 15):

«... Ինչպես այլևս մենք մեր հողին վերադառնանք, ինչպես դառնանք...» (Ս, 168):

Ըղձական եղանակի բայաձևերն արտահայտում են նաև կատարելի գործողության պատվեր, հորդոր, երբեմն խնդրանք: Այս դեպքում նրանք հաճախ ուղեկցվում են թող բառով.

«Թող լուսնակի պես մոայլ ծոցս ողողեն

Ոսկի վարսերդ սնդուս...» (ԴՎ, 454):

«Ու թարթիչներդ թող բնավ չթարթվեն» (ՊՍ, 256):

Հայերենի զարգացման հին և միջին շրջաններում հին հայերենի ներկայի բայաձևերը ապառնի ժամանակի իմաստն արտահայտում էին շարակարգում (КОИТЕКТ), ըստ որում՝ նկատի ունենք ինչպես նախադասության բովանդակությունը (ըղձական, երբեմն երկբայական և հարցական նախադասություններ), սրբայես էլ կառույցները (շարահյուսական որոշակի կառույցներ): Նոր շրջանում, երբ նրանք ազատվել էին ներկա ժամանակի իմաստից (և այդ իմաստով կիրառությունները գրաբարամետ իրողություններ էին), ապառնի ժամանակի իմաստն այդ բայաձևերի քերականական իմաստն էր շարակարգից դուրս:

Գրական հայերենի երկու տարբերակներում էլ բայն ունի ըղձական եղանակ, որի ապառնի ժամանակն արտահայտվում է հին հայերենի ներկայի բայաձևերի միջոցով, իսկ անցյալ ժամանակը՝ հին հայերենի անցյալ անկատարի բայաձևերի միջոցով (որոնք անցել են իմաստային զարգացման պատմական այն ճանապարհը, ինչ ներկայի բայաձևերը):

Այսպիսով, հին հայերենի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերի ձևաիմաստային հետագա փոփոխությունների միջոցով ձևավորվում է ժամանակակից հայերենի ըղձական եղանակի ապառնի ժամանակը:

Ժամանակակից հայերենը գրաբարից ժառանգել է հինգ բայ, որոնք պահպանել են ներկայի կազմության համադրական ձևը՝ եմ, կամ, գիտեմ, արժեմ, ունեմ: Սա թերևս պետք է քաջատրեյ նրանց բայական իմաստով: Նրանց բառային իմաստն այնքան վերացական է, որ հավասարազոր է քերականական իմաստի: Նրանց լրացումները սովորական լրացում-լրացյալի հարաբերություն չեն արտահայտում, այլ արձանագրում են հատկանիշը՝ իբրև լինելություն: Նրանք ավելի շատ քերականական նշանակության բառեր են:

Սրանով է պայմանավորված նրանց մեծ կիրառելիությունը: Սրանցից հին հայերենի շրջանում պակասավոր էր եմ բայը, որն ուներ սահմ. ներկայի, անցյալ անկատարի և ստոր. առաջին ապառնու ձևերը: Միջին հայերենի շրջանում ձևավորվում են գիտեմ, արժեմ, ունեմ բայերի զուգահեռ ձևերը՝ եմ (այլ) ստկածանցով՝ գիտեճամ, արժեճամ, ունեճամ: Աժանցը նրանց միջև ժամանակային որևէ հակադրություն չէր ստեղծում:

«Եւ զկանս սպանութիւններն աշխարհական պարոնայք գիտեճամ (ՍԳԴ, 88):

«... իրենք գիտեն զայս՝ ու տան պացխուն առաջի Քրիստոսի... (ՍԳԴ, 42):



Ի դեպ, առաջին օրինակում ունենք ե՞նչ՝ և հնչյունփոխությունը, որը բնորոշ էրե-վոյթ է այս շրջանի համար:

Կամ՝ «... Եւ զծխերն տայ ում կամի...» (ՍԳԴ, 52):

«... Նա կարէ իր ազգի եւ կամ յում ինք կամեմայ...» (ՍԳԴ, 52):

Պարզ և ածանցավոր ձևերի մեջ կան միակատար-բազմակատար կերպային հակա-դրություններ: Ե՞ն-ով ձևերն ունեն ժամանակային բոլոր ձևերը, իսկ պարզ ձևերը պակ-սավոր են: Նրանք ունեն միայն առհմ. եղանակի ներկա և անցյալ անկատար ժամա-նակաձևեր: Մնացած եղանակաժամանակային ձևերը եմ, կամ բայերը լրացնում են լինել բայով, իսկ մյուս երեքը՝ -եմ ածանցով բայաձևերով:

Արևմտահայերենը նույնպես ժառանգել է սրանց ներկայի կազմության գրաբարյան ձևերը: «Արժեմ» բայը ներկան կազմում է կ-ով: Մյուս բայերը մնացած ժամանակաձևերը լրացնում են ե՞ն-ով. «Ես շատ տառապանք տեսած եմ, գիտեմ թէ ինչ կ'արթէ դժբախտ մանկություն մը...» (ԾԾ, 109):

«— Ասկէ աւելի մեծ ոճիր ի՞նչ կայ...» (ԾԾ, 107):

«... գիտեմ, որ այդ բառը քեզի համար իմաստ չունի, բայց ի՞նչի համար ունի...» (ԾԾ, 94):

«... ոչինչով կրճամ ինքզինքս մեղադրել...» (ԾԾ, 97):

«... մարդուն այդ խղճայի տեսքը կարծես արգիլեց, որ կարեմայ անմիջապէս փախ-չիլ...» (ԾԾ, 96):

«Անհրաժեշտ է, որ նախ ևս ժամէթը տեսնեմ, գրոյց մը ունենանք...» (ԾԾ, 98):

#### Գ. Հին հայերենի ներկա ժամանակի վերլուծական կառույցների ձևագործառական առանձնահատկությունները XVII—XX դդ.-ում

Հին հայերենի շրջանում ներկա ժամանակը կարող էր արտահայտվել նաև անորոշ դերբայի ներգոյական հոլովի և «եմ» օծանդակ բայի ներկայի ձևերով: «Այս ձևերը, որ հնների մեջ մեկ-մեկ երևում են, հետագա դարերում ավելի հաճախված են արդեն սահ-մանական ներկայի նշանակությամբ<sup>8</sup>: Միջին հայերենի շրջանում այս կազմության դրա-կան խոնարհման ձևերը սակավադեպ են.

«... և ժամ մի հանց գիտեմայ, թէ արիւնահամ ընր, քերանն ի դուրս է ի գալ...» (ԱԱՌԲ, 151):

«... սաէ աղուեսն ի միտս իր, դառնամ և տեսնում զիւնչվածն, թէ ի գալ է...» (ՎԱԱ, 38):

Վարդան Արևելցին իր պատմությունը շարադրում է գրաբարով, միայն Հունադու խանի հետ իր տեսակցությունն է հեղինակը պատմում ժողովրդական լեզվով: Մի փոքրիկ հատ-վածում գտնում ենք ներկայի արտահայտության այս հարադիր կառույցի մի շարք օրի-նակներ.

«Ապա ասացաք թէ— «առաջի Աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ...» (ՎԱՊՏ, 207):

«... թէ յիշանել լուսոյն՝ Հայոց կանթեղն է ի վառիլ...» (ՎԱՊՏ, 202):

«Հրամայեաց թէ— «հաւատալ եմ որ հանց է...» (ՎԱՊՏ, 207):

Ինչպես տեսնում ենք, արդեն հեղինակը տալիս է առանց ի նախորդի կիրառության օրինակներ:

Ներկայի արտահայտության այս կազմության ժխտական խոնարհման ձևերը միջին հայերենի շրջանում հաստատվում են իբրև կու-ով կազմությունների ժխտական խոնարհ-ման ձևեր և մտնում են խոնարհման հարացույցի մեջ: Հերացու «Ջերմանց մխիթարու-թիւն» աշխատության մեջ գտնում ենք այս կազմության հետևյալ օրինակները.

«... զի ցնորքս է իր բորբոսն ... և չէ ի պակասել...» (ՄՀԶԱ, 110):

«... զի ամենեւին արեւնքս չէ ի տալ, որ բիճն երեց լինի...» (ՍՊԴ, 49):

«Է՞ր չէք ի գարմանալ,

ու կամ հարցոյ լինիլ բանիս...» (ԿԵԲ, 129):

Ժխտական խոնարհման այս հարադիր կառույցները հանդես են գալիս նաև հետևյալ փոփոխություններով՝

ա) նախորդի անկումով,

բ) անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր-ի հնչյունափոխությամբ՝ ինչպես նախորդավոր, այն-պես էլ առանց նախորդ կառույցներում:

«... ստոյգ կերակուր կու ասեն, դեղ չեն ասել...» (ԱԱԱԱ, 3):

<sup>8</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 312:

«Մահիկս է լեղի դարձեր,

Օճերուն ձգեմ՝ չեմ ուտել...» (ԳԺՏ, 54):

«Չի տալ հրաման արեւքս՝ որ...» (ՍԿԴ, 25):

«Ձեռ ի տար պահիկ մի դադար...» (ԳԺՏ, 65):

«... չի թողուր, որ հոգին իր բնութենովն զիր բանն տեսնէ» (ԱԱՕԲ, 164):

Աճառյանը անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր-ի հնչյունափոխությունը կատարված է հաճարում արգելական հրամայականի համաբանությամբ<sup>9</sup>:

Կու (կ)-ով կառույցները բազմմաստ էին: Նրանք արտահայտում էին ներկա և ապառնի ժամանակների իմաստ: Քերականական այս բազմմաստությունը, բնականաբար, բնութագրական է նաև նրանց ժխտական խոնարհման ձևերին:

Այսպիսով, հին հայերենում հատուկենտ հանդիպող ի նախորդով, անորոշ դերբայով և օժանդակ բայով արտահայտված ներկայի կազմությունները հիմք հանդիսացան, որպեսզի միջին հայերենի շրջանում ձևավորվեր կու (կ)-ով կառույցների ժխտական խոնարհման հարացույցը: Այս կառույցի դրական խոնարհման հազվադեպ հանդիպող օրինակներն արդեն հնաբանություններ են.

«Դու ամաչում ես, կենալ ես դուռըն...» (ՆՀԲ, 83):

Նոր գրական հայերենի մշակման ընթացքում այս ժխտական ձևերը հանդես են գալիս՝ ա) Խ նախորդով, անորոշ դերբայով և օժանդակ բայով, բ) Խ նախորդով, անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր-ի հնչյունափոխված ձևով և օժանդակ բայով,

գ) օժանդակ բայով և անորոշ դերբայով,

դ) օժանդակ բայով և անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր-ի հնչյունափոխված ձևով,

ե) օժանդակ բայով և անորոշ դերբայի լ ձայնորդի սղված ձևով:

Խ նախորդի անկման պատճառով հաստատվում են աննախդիր ձևերը:

«... ել փողն յետ չեմ տալ...» (ԶԱՕ, 181):

«... Մեկն էլ չի ասեր, թէ ես եմ թուրըն...» (ՆՀԲ, 84):

Եզակի Յ-րդ դեմքում օժանդակ բայը հանդես է գալիս ինչպես չէ, այնպես էլ չի ձևերով:

«Աշխարհս մեզ չէ մնալ պաղի...» (ՆՀԲ, 166):

«Անցեալ օրին օր չի հասնիլ...» (ՆՀԲ, 178):

Հանդիպում են նաև օրինակներ, երբ ձայնալորից առաջ օժանդակ բայի ի-ն ընկել է, և ժխտականի չ-ն պարզապես միացել է անորոշ դերբային.

«Մարդ կայ, որ ինքն չանել մեծութիւն...» (ՆՀԲ, 84):

Ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայը դրվում է անորոշ դերբայից առաջ: Բայց հաճախ հանդիպում ենք նաև օժանդակ բայի ետադաս կիրառության: Սա բարբառային իրողություն է.

«Մարդ կայ՝ դատիլ չի, դատածն ցըրվի...» (ՆՀԲ, 86):

«... բո թումանով պրծանիլ չէ...» (ԶԱՕ, 101):

Ժխտական ձևերը հանդես են գալիս նաև օժանդակ բայով և անորոշ դերբայի -լ-ձայնորդի սղված ձևերով: Այս կազմություններն ավելի հաճախադեպ են դառնում 18-րդ դարից.

«Աշխարհումըս ախ չիմ քաշի, բանի վուր ջան իս ինձ ամա...» (ՄՆԲ, 97):

Այս կառույցներում մենք գործ ունենք ժխտական դերբայի հետ:

Նոր գրական հայերենում արդեն ոչ միայն կար ժխտական դերբայի գաղափարը, այլև դերբայն ինքը, որը, միանալով օժանդակ բայի ժխտական խոնարհման ձևերին, կազմում էր կ-ով կառույցների ժխտական խոնարհման հարացույցը: Ա լծորդության բայերը լ-ի անկումից հետո ուրիշ փոփոխություն չեն կրում, իսկ ե լծորդության բայերի ե-ն փոխվում է ի-ի: Սա թերևս պետք է բացատրել ի լծորդության բայերի համաբանությամբ, մանավանդ որ ժխտական խոնարհման ժամանակ, ինչպես արդեն ցույց ենք տվել, ե լծորդության բայերի ել վերջավորությունը երբեմն փոխվում էր իլ-ի:

Այս փոփոխությունները բնորոշ են արևելահայերենին: Արևմտահայերենը ժառանգում է անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր-ի հնչյունափոխությամբ ձևերը:

«... Գրությունը մենք չենք ճանչնար...» (Ս, 63):

«Արյուն չի թափվի...» (ՊՍ, 295):

Այսպիսով, հին հայերենի ներկայի արտահայտության վերլուծական կառույցների պատմական զարգացման արդյունքը ինձում է այն, որ ձևավորվում է ժխտական դերբայը: Վեր-

<sup>9</sup> Տե՛ս Լ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. IV, մաս Բ, Ե., 1961, էջ 867:

ջինիս և օժանդակ բայի ժխտական խոնարհման ներկայի ձևերով կազմվում են արևելահայերենում պայմանական ապառնի, արևմտահայերենում սահմ. ներկա և պայմանական ապառնի ժամանակների ժխտական խոնարհման հարացույցները:

#### Համառոտագրություններ

- ԱԱԱԱ— Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ կամ բառարան բժշկական հիւօոոց, Վիեննա, 1927
- ԱԱՕԲ— Ամիրդովլաթ Ամասիացի, Օգոստոսի բժշկություն, Ե., 1940
- ԱԲԵ— Ակսել Բակունց, Երկեր, Ե., 1975
- ԱԻ— Ալեանիք Խահակյան, Երկեր: 6 հ-ով, հ. 1, Ե., 1973
- ԱԸ— Արհեստ համարողութեան... Մարշիլեայ, 1675
- ԳԺՏ— Գուսանական ժողովրդական տաղեր. հայրեններ, անտուհներ, Ե., 1940
- ԵԿԴ— Եղիա Կարենցի, Դիվան, Ե., 1968
- ԶԱՕ— Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Ե., 1938
- Էզով— Эзов Г. А., Сношения Петра Великого с Армянским народом. Документы, С. Петербург, 1898 г.
- ԿԵԲ— Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Ե., 1962
- ՀԱ— Հայ աշուղներ, XVII—XVIII դդ., Ե., 1961
- ՀԱՎ— Հուսարուն աստուածային վկայութեան..., Շուշի, 1829
- ՀԳՊԸ— Համաշխարհային գրականություն պատահիների համար, հ. 8, Ե., 1991
- ՀԹ— Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հ-ով, հ. 1, Ե., 1969
- ՄԸԶՄ— Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1832
- ՆԸԲ— Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Ե., 1951
- ՇՇ— Շահան Շահնուր, Նահանջ առանց երգի, Փարիզ, 1929
- ՊԴՏ— Պետրոս Դուրյան, Տաղեր, Ե., 1963
- ՊԱ— Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, 6 հ-ով, հ. 1, Ե., 1972
- ՍՎԴ— Հայ դասականների գրադարան, Դ. Վարուժան, Սիամանթո, Ե., 1979
- ՍԳԴ— Սմբատ Սպարապետ (Գունդատար), Դատաստանագիրք, Ե., 1958
- ՄՆ— Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Ե., 1963
- ՎԱԱ— Март Н., Сборники притч Вердала, ч. II, С. Петербург, 1894
- ՎԱՊՏ— Վարդան Բարձրբերդեցի (Արևելցի)— Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861
- ԲԵ— Բաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հ-ով, հ. 1, Ե., 1962

А. Л. ЮЗБАШЯН. — Морфо-функциональные изменения глагольной формы настоящего времени изъявительного наклонения древнеармянского в литературном XVII—XX вв. — В новом литературном армянском глагольные формы наст. вр. изъяв. накл. грабара претерпели частичные изменения, связанные с характерными для того времени фонетическими сдвигами. В обоих вариантах нового литературного языка синтетические структуры наст. вр. грабара утверждаются как выразители будущ. вр. сослагательного наклонения. Результатом исторического развития аналитических структур стало формирование отрицательного причастия, которое вместе с формой отрицательного спряжения наст. вр. вспомогательного глагола составило парадигму отрицательного спряжения в восточноармянском — условного будущего, а в западноармянском — настоящего изъяв. наклонения ж будущего условного.